

ՎԱՏՈՒՄ ՈՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՄԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ

Գիշերը երբ երկինքը պայծառ է պսպղացող հազարավոր աստղեր կը տեսնուին: Այս բազմահազար աստղերը կը ներկայացնեն աննշան մաս մը այն 200 միլիառ աստղերէն, որոնք տարտղնուած են տիեզերքին մէջ: Արեւը երկրին ամենամօտիկ աստղն է: Աստղ մը կազի բոցավառող հսկայական գունդ մըն է:

Համաստեղութիւն

Համաստեղութիւն մը աստղերու պզտիկ խումբ մըն է, որ որոշ գծապատկեր մը կը կազմէ երկինքին մէջ: Համաստեղութիւնները թիով 88 հատ են եւ ընդհանրապէս ունին արաբական ծագումով անուններ, որոնք մօտաւորապէս կը յիշեցնեն իրենց նմանող անասուն մը կամ իր մը (Պզտիկ արջ, Մեծ արջ, Առիւծ, Կշիռք...): Անոնցմէ տասներկուքը կը կազմեն կենդանակամարի համաստեղութիւնները:

Կենդանակամար

Կենդանակամարը երկինքի աստղերէն է: Գոյութիւն ունին կենդանակամարային 12 նշաններ (կենդանակերպեր): Աստղաբաշխները կը վերլուծեն կենդանակամարային նշանները (աղթարք) ճանչնալու համար անոր անձ մը ծնած պահուն՝ ունենալիք իր նկարագիրը եւ ապագան:

Կենդանակամարի նշանները

- | | |
|--|---|
| Այծեղջիր
22 Դեկտեմբեր - 19 Յունուար | Խեցգետին
21 Յունիս - 22 Յուլիս |
| Ջրիս
20 Յունուար - 18 Փետրուար | Առիւծ
23 Յուլիս - 22 Օգոստոս |
| Չուկ
19 Փետրուար - 20 Մարտ | Կոյս
23 Օգոստոս - 22 Սեպտեմբեր |
| Խոյ
21 Մարտ - 19 Ապրիլ | Կշիռք
22 Սեպտեմբեր - 22 Հոկտեմբեր |
| Յուկ
20 Ապրիլ - 20 Մայիս | Կարիճ
23 Հոկտեմբեր - 21 Նոյեմբեր |
| Երկուորեակ
21 Մայիս - 20 Յունիս | Աղեղնաւոր
22 Նոյեմբեր - 21 Դեկտեմբեր |



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՐ՝ ՈՒՐԱՅ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՄԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱՋԱՐՈՒՄԵՐ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ԲՈՅՍԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Բոյսերը կրնա՞ն հիւանդներ առողջացնել

Այո՛: Բուժիչ յատկութիւն ունեցող բոյսերը կը գործածուին ոչ միայն կարգ մը հիւանդութիւններ բուժելու այլ եւ որպէս կանխարգելիչ միջոց: Մարդկութիւնը երկար ատեն է վեր ծանօթ է այդ բոյսերու յատկութիւններուն: Նոյնիսկ անասունները կը գործածեն անոնցմէ ոմանք: Կատուները, օրինակի համար, իրենց աղիքները մաքրելու համար, կատուանուխ (herbe-aux-chats) կ' ուտեն: Բայց ուշադրութիւն, այս բոյսերը դեղերու կը նմանին: Չանոնք պէտք չէ ազատօրէն գործածել, կրնան նաեւ վտանգաւոր դառնալ:

Բոյսերու միջոցաւ կարելի՞ է ներկել

Ժամանակին քիմիական ներկեր չկային: Յատկապէս բոյսեր կը գործածուէին՝ կերպասներն ու հագուստները ներկելու համար:

Չափահաս անձի մը օգնութեամբ՝ կարող ես խաշած հաւկիթներ ներկել: Ջուրով լեցուն սանի մը մէջ կը դնես ուզած բոյսերդ եւ կ' եռացնես: Ապա հաւկիթները կը թաթխես անոր մէջ: Ահա թէ ինչպէս կրնաս ստանալ կարգ մը գոյներ. դեղինը՝ ստեպղինի կեղուածքներով, դեղնորակ-սրճագոյնը՝ թէյով, կարմիրը՝ ճակնդեղով, կանաչը՝ շոմինով:


Ճաշակելի ծաղիկներ կա՞ն

Անշո՛ւշտ: Դեղին նունուֆարի անուշիկն մասին չե՞ս լսած: Նմանապէս վարդի, մանուշակի եւ յամիկի անուշները շատ համեղ կ' ըլլան:

Դդումի ծաղիկները աղցանի մէջ կ' ուտուին: Կարելի է նաեւ կարագի մէջ տապկել մանուշակի թերթեր եւ զանոնք ճաշակել շաքարով եւ սերով: Բայց ուշադրութիւն՝ կարգ մը ծաղիկներ թունաւոր են, ինչպէս մատնուկը (digitale):



Կրնա՞ս գտնել խեցիին
հասցնող ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին
մէջ պահուած տասը
ոսկորները:



Գունաւոր մատիտներդ
բեր ու սկսե՛ ներկել:

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԲԱԿԼԱՆ



Ժամանակին Արամ անունով փոքրիկ տղայ մը կար: Ան կ'ապրէր իր ծերունի մօրը հետ, անտառին մօտիկ, խրճիթի մը մէջ:

Անոնք կով մը ունէին: Ամէն ամառու մայրիկը կովը կը կթէր, իսկ Արամ կաթը շուկայ կը տանէր, կը ծախէր ու անկէ շահած դրամով կը հոգար տան պէտքերը:

Օր մը կովը կը հիւանդանայ ու կը դադրի կաթ տալէ: Մայրիկն ու Արամը կը մտահոգուին. ի՞նչ ընեն, ինչպէ՞ս ապրին: Ո՛չ դրամ ունէին, ո՛չ ուտելիք:

Ճարահատ՝ մայրիկը կ'ըսէ.

- Արա՛մ, վաղը ամառուտ կովը շուկայ տար ու ծախէ. անոր դրամով մեզի հորթուկ մը կամ այծ մը գնէ:

Յաջորդ օրն իսկ Արամ կովը շուկայ կը տանի ծախելու:

- Կո՛վ կը ծախեմ, կո՛վ, ո՞վ կը գնէ,- կը կանչէ ան մինչեւ կեսօր: Բայց ոչ ոք կը գնէ զայն:

Մինչ յուսահատ կը քալէր, դէմը կ'ելլէ թզուկ մը:

- Բարե՛ւ, փոքրիկ տղայ, կո՞վ կը ծախես,- կը հարցնէ թզուկը:

- Այո՛,- կը պատասխանէ Արամ:

- Ե՛ս կը գնեմ քու կովդ,- բայց անոր փոխարէն քեզի կու տամ այս բակլան:

- Բակլա՛յ,- կը բացագանչէ Արամ զարմացած:

- Այո՛,- բակլայ,- կ'ըսէ թզուկը,- բայց ան սովորական բակլայ չէ, կախարդական բակլայ է. եթէ խելացի ու ճարպիկ գտնուիս, ան կրնայ քեզ հարստացնել, շա՛տ հարստացնել: Թէ ինչպէ՛ս, այդ մէկը հիմա չեմ ըսեր, թող մնայ անակնկալ:

Արամ կը յօժարի. կովը կու տայ թզուկին ու անոր փոխարէն բակլան կ'առնէ:

Երբ տուն կը վերադառնայ, մայրիկը մտահոգուած կը հարցնէ.

- Արա՛մ, ծախեցի՞ր կովը:

- Այո՛, մայրի՛կ,- կը պատասխանէ Արամ,- փոխարէնը՝ տես քեզի ի՛նչ բերի. բակլայ, կախարդական բակլայ:


- Բակլա՞յ... ի՛նչ բակլայ,- կը գոչէ մայրիկը բարկացած ու ձեռքէն բակլան խլելով կը նետէ պատուհանէն դուրս:

- Վաղն իսկ շուկայ կ'իջնես ու կովը ետ կը բերես, մինչեւ չբերես, տուն չես վերադառնար,- կ'ազդարարէ մայրիկը:

Արեւուն ամառին շողերուն հետ, Արամ կ'արթննայ ու դուրս կ'ելլէ տունէն: Հագիւ դուրս ելած՝ կը բացագանչէ.

- Այս ի՛նչ ծառ է, այս ի՛նչ երկար ճիւղեր են, կարծես երկինք հասած են: Ուրեմն, թզուկին ըսած անակնկալը ա՛յս է: Բայց ո՞ր է կախարդական բակլան. եթէ մագլցիմ ծառն ի վեր:

(Շարունակելի)



ՃԻՇԴ, ԹԵ ՍԽԱԼ


1.- 1 Հոկտեմբեր 1949-ին Մաօ Ցե Թունկ ժողովրդավարություն կը հաստատե Չինաստանի մէջ:
Ճի՞շդ, թէ սխալ

2.- 17 Յունիս 1991-ին Լախագահ Նելսըն Մանտելայի կառավարութիւնը վերջ կը դնէ Հարաւային Ափրիկէի մէջ խտրականութեան քաղաքականութեան:
Ճի՞շդ, թէ սխալ


3.- 29 Մայիս 1953-ին անգլիացի սըր Էտմունտ Հիլարի եւ իր շերփանը (ուղեկցորդ)՝ Նեփալցի Թենզիկ Նորկէյ եղան առաջին լեռնագնացները, որոնք հասան Էվերեսթի գագաթը:
Ճի՞շդ, թէ սխալ

4.- 1972-ին տունի առաջին վիտեօ խաղի դրութիւնը՝ «Նինթենսօ Օտիսի»-ն կ'իջնէ շուկայ:
Ճի՞շդ, թէ սխալ

5.- 17 Դեկտեմբեր 1903-ին Ռայթ եղբայրները առաջին թռիչք մը կը կատարեն Քիթթի Հոքի մէջ, Հիւսիսային Քարոլայնա, Միացեալ Նահանգներ:
Ճի՞շդ, թէ սխալ



Նելսըն Մանտելա



Ռայթ եղբայրներ

1.- Սուրբ Գրիգոր Գեղարքունացի Սուրբ Գրիգոր Գեղարքունացի
2.- Սուրբ Գրիգոր Գեղարքունացի Սուրբ Գրիգոր Գեղարքունացի
3.- Սուրբ Գրիգոր Գեղարքունացի Սուրբ Գրիգոր Գեղարքունացի
4.- Սուրբ Գրիգոր Գեղարքունացի Սուրբ Գրիգոր Գեղարքունացի
5.- Սուրբ Գրիգոր Գեղարքունացի Սուրբ Գրիգոր Գեղարքունացի

մշղղություն